Ազգ
Azg
26 ՅՈՒԼԻՍ 2007 ՀԻՆԳՇԱԲԹԻ 140 (3792)

# «Փյունիկը» մտավ հաջորդ փուլ

«Փյունիկը» հաջողությամբ հաղթահարեց Չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլի արգելքը՝ երեկ «Հանրապետական» մարզադաշտում 2-0 հաշվով հաղթելով իռլանդական «Դերի սիթիին»: Դեռեւս առաջին խաղից հետո մեր չեմպիոնը հիանալի հնարավորություն էր ստացել հաջորդ փուլի ուղեգիր նվաճելու, եւ Երեւանում փյունիկցիները ձեռքից բաց չթողեցին պայքարը շարունակելու առիթը: «Փյունիկը» խաղադաշտ էր դուրս եկել իր մարտական կազմով: Այդ խաղում հատկապես աչքի ընկավ թիմի վետերան Արսեն Ավետիսյանը, որն էլ առաջին խաղակեսում բացեց հաշիվը: Ընդմիջումից հետո էլ փյունիկցիները շարունակելով հարձակողական գործողությունները, եւս մեկ անգամ, Գեւորգ Ղազարյանի դիպուկ հարվածի շնորհիվ, հասան հաջողության:

Չեմպիոնների լիգայի որակավորման երկրորդ փուլում «Փյունիկը» կմրցի Ուկրաինայի փոխչեմպիոն Դոնեցկի «Շախտյորի» հետ: Ինչ խոսք, այդ մրցավեճում փյունիկցիներին լուրջ փորձություն է սպասվում:

# Ո՞վ է դարձել ամենաարտոնյալ օլիգարխը

*Դատելով հարկային ծառայության հրապարակած 300 խոշոր հարկատուների ցանկից*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ




Այս տարվա հունվար-հունիս ամիսներին առաջին 300 խոշոր հարկատուների օրերս հրապարակված («Ազգ», 24 հուլիսի 2007 թ.) ցանկում արդեն երկրորդ անգամ, ինչպես եռամսյակային ցուցանիշների ժամանակ, առաջատարը «Հայռուսգազարդն» է՝ գրեթե 12 մլրդ դրամ կազմող վճարած հարկերով: Այս ցուցանիշը հատկանշական է նաեւ նրանով, որ ընկերության անցյալ տարվա նույն ժամանակահատվածի վճարած հարկերի ավելի քան կրկնապատիկն է: Երկրորդ տեղում «Արմենտելն» է՝ 10,1 մլրդ դրամ ցուցանիշով: Այս ընկերությունը ամենամեծ շահութահարկ եւ եկամտահարկ վճարած ընկերությունն է: 4,5 մլրդ դրամը այդ հարկատեսակներից ստացված հարկային մուտքերն են: Երրորդում մինչեւ վերջերս շարունակաբար առաջին տեղը զբաղեցնող Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է՝ 9,6 մլրդ դրամ վճարված հարկերով: Հարկ է նշել, որ 2006 թ.-ի առաջին կիսամյակում այս ընկերությունը վճարել էր ավելի քան 13 մլրդ դրամ հարկեր:

Պատվավոր չորրորդ տեղում կայուն դիրքեր է զբաղեցնում բջջային կապի երկրորդ օպերատոր «Կ-Տելեկոմը» («Վիվասել» ապրանքային նշանով): Այս ընկերությունը վճարել է 7,4 մլրդ դրամ, որից շահութահարկն ու եկամտահարկը՝ 4,3 մլրդ դրամ է: Փաստորեն կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում ամենախոշոր շահութահարկ վճարողները հեռահաղորդակցության ոլորտի երկու խոշոր ընկերություններն են:

Տես էջ 3

# Հրեան ռուս նացիոնալիստի դերում

Ինչպես հաղորդում է մոսկովյան «Կոմերսանտ» թերթը, վկայակոչելով «Էխո Մոսկվի» ռադիոկայանը, հուլիսի 22-ին Տուլայի մարզի Վենեւսկի շրջանում կոնֆլիկտ է բռնկել հայ համայնքի ներկայացուցիչների եւ տեղի բնակչության միջեւ: Արձանագրվում է, որ հայերը մի քանի հարձակումներ են գործել (ի՞նչ բնույթի եւ ի՞նչ հետեւանքներով՝ չի նշվում): Բնակիչները պահանջել են պատժել «հանցագործներին», ստուգել ներգաղթածների բնակության օրինականությունը: Իրավապահ մարմինների վկայությամբ, հակամարտությունը տնտեսական հիմք ունի:

Ուշագրավն այն է, որ ողջ ինֆորմացիայի հեղինակը Ապօրինի ներգաղթողների դեմ պայքարի ծայրահեղ նացիոնալիստական շարժման լիդեր Ալեքսանդր Բելովն է (իրականում՝ հրեա Պոտկինը): Բնական է, որ նա դեպքերը վերարտադրում է ազգամիջյան հարաբերությունների տեսանկյունից եւ հրահրում հակահայկական տրամադրություններ:

Դժվար է նույնիսկ ընկալել «հրեա ռուս նացիոնալիստ» բառակապակցությունը...

Ռ. Ռ.

# «Ազատությունը»՝ Հանրային ռադիոյի եթերից դուրս

Ամերիկյան հեռարձակումների տնօրենների խորհրդին չի հաջողվել համաձայնություն ձեռք բերել Հայաստանի հանրային ռադիոյի հետ՝ «Ազատություն» ռադիոկայանի հաղորդումների հետագա վերահեռարձակման շուրջ: Հուլիսի 24-ի ուշ երեկոյան «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանը եւ այն վերահսկող գործակալությունը՝ Ամերիկյան հեռարձակումների տնօրենների խորհուրդը Վաշինգտոնում տարածել են հաղորդագրություն՝ մտահոգություն արտահայտելով, որ Հայաստանի Հանրային ռադիոն հրաժարվել է երկարաձգել «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության ծրագրերի հեռարձակումը շարունակելու պայմանագիրը:

Ըստ «Ազատության», հաղորդագրության մեջ նշվում է, որ ուսումնասիրությունների տվյալները վկայում են, որ Հայաստանի մեծահասակ բնակչության 15 տոկոսը ամեն շաբաթ լսում է «Ազատություն» ռադիոկայանի ծրագրերը: «Մեր պատվիրակությանը խնդրեցին մեկնել Երեւան՝ շտկելու որոշ աննշան տեխնիկական հարցեր եւ կնքելու այս հաջող գործընկերությունը երկարաձգելու պայմանագիր», ասել է Ամերիկյան հեռարձակումների տնօրենների խորհրդի նախագահ Ջեյմս Գլասմանը: «Բոլոր այդ հարցերը լուծվեցին: Մեր պատվիրակությանն ասացին, որ վերջնաժամկետներ չկան եւ որեւէ սպառնալիք չկա, որ «Ազատություն» ռադիոկայանի ծրագրերը դուրս կմնան Հանրային ռադիոյի եթերից: Պայմանագիրը, այդուհանդերձ, մնաց չստորագրված, իսկ վճարումները կատարելու մեր առաջարկությունը մերժվեց: Ակնհայտ է, որ այն, ինչը խոչընդոտում է պայմանագրի ստորագրմանը, կապ չունի իրավական, պայմանագրային կամ տեխնիկական հարցերի հետ»:

Ուշ երեկոյան «Հայլուրը» հրապարակեց Հանրային հեռուստառադիոխորհրդի պատասխան հայտարարությունը, որի մասին՝ մեր վաղվա համարում:

Ա. Հ.

# Հոկտեմբերին կգան Բունդեսթագի պատգամավորները

Գերմանիայի Բունդեսթագի Կովկասի երկրների հետ բարեկամության պատգամավորական խումբը հոկտեմբերի 22-24-ին կայցելի Հարավկովկասյան տարածաշրջան: «Պանարմենիըն.նեթ» կայքէջի տեղեկացմամբ, այդ մասին հայտարարել են Բունդեսթագի մամլո ծառայությունում: Գերմանացի խորհրդարանականների այցը կսկսվի Ադրբեջանից, այնուհետեւ նրանք կայցելեն Վրաստան եւ Հայաստան:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎ

# Շուրջ 10 հազար մասնակից «Call-In Day» քարոզարշավին

220 կոնգրեսականների հետ Ամերիկայի հազարավոր հայեր եւ մարդու իրավունքի պաշտպաններ մասնակցեցին Հայոց ցեղասպանության 106-րդ բանաձեւին սատարելու նպատակով Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի՝ ANCA-ի կազմակերպած երկրորդ համազգային քարոզարշավին: Շուրջ 10 հազար մարդ է այցելել ANCA-ի կայքէջ եւ եւս 2,500-ը եղել են կապի մեջ կոնգրեսականների գրասենյակների հետ հուլիսի 23-ին:

Ըստ բանաձեւի հեղինակ, Կալիֆոռնիայից կոնգրեսական Ադամ Շիֆի, բանաձեւի օգտին կազմակերպված ANCA-ի համազգային քարոզարշավը հզորության հսկայական ցուցադրում էր: «Այդ կոչերը օգտակար գործիք են Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեւի ընդունման համար: Ես երախտապարտ եմ ANCA-ին եւ նրա բոլոր կողմնակիցներին այդ կարեւոր ծրագրին մասնակցելու համար», ընդգծել է Շիֆը:

# Բացահայտվել է հայոց եւ հունաց պատրիարքների դեմ մահափորձերի ծրագիրը

Թուրքիայի «Ազգային բանակ» միության նախագահ Բեքիր Օզթուրքի համակարգչում հայտնաբերվել են Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանի, հունաց Բարդուղիմեոս տիեզերական պատրիարքի եւ գործարար Իսհակ Ալաթոնի դեմ ուղղված մահափորձի ծրագրեր: Ինչպես տեղեկացնում է «Զաման» օրաթերթը, վկայակոչելով «Gazeteport» կայքէջը, «Ազգային բանակ» միության անդամները պատրաստվում էին կյանքի կոչել այդ ծրագիրը՝ Թուրքիայի նախագահական ընտրություններում վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կամ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության մեկ ուրիշ ներկայացուցչի հաղթանակի դեպքում: Մահափորձի ծրագրերի բացահայտումից հետո երկրի դատախազությունը հայոց եւ հունաց պատրիարքների, գործարարի անվտանգության ապահովման հայց է ներկայացրել ազգային անվտանգության վարչություն: Հիշեցնենք, որ «Ազգային բանակ» միության նախագահը ձերբակալվել է մոտ մեկ ամիս առաջ, Ստամբուլի Ումրանիյեի շրջանի դեպքերի հետաքննության արդյունքում:

# Վիկտոր Համբարձումյանի եւ Վիլյամ Սարոյանի հոբելյանները ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2008-2009 թվականների հոբելյանական պատվավոր օրացույցի մեջ են ներառվել անցած հարյուրամյակի աստղաֆիզիկայի զարգացման հիմնական ուղղություններն իր գիտական նվաճումներով կանխորոշած գիտնական Վիկտոր Համբարձումյանի եւ քսաներորդ դարի նշանավոր գրող Վիլյամ Սարոյանի 100-ամյա հոբելյանները: Միջոցառումներ են նախատեսվում այս տարի ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո: Այս մասին տեղեկացրել է կազմակերպության Հայաստանի ազգային հանձնաժողովը:

# Մինսկի խմբի համանախագահները կհանդիպեն օգոստոսի 2-ին

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ծրագրում են հանդիպել օգոստոսի 2-ին Մոսկվայում: Այս մասին տեղեկացնում է Արմենպրեսը, վկայակոչելով ԵԱՀԿ մամուլի խոսնակ Մարտին Նեսիրկինի ԱՄՆ պետդեպարտամենտից ստացած տեղեկացումը: Համանախագահները նպատակ ունեն հստակեցնելու առաջգա քայլերը ԼՂ բանակցային գործընթացում:

# Համաշխարհային հայկական կոնգրեսը ծրագրում է երկխոսություն հայ եւ վրացի երիտասարդների միջեւ

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




2002 թ.-ին Ռուսաստանի հայերի միությունը Մոսկվայում հրավիրեց «Աշխարհի հայերը դարերի սահմանագծին եւ միջազգային հարաբերությունների արդիական խնդիրները» կոնֆերանսը շուրջ 50 երկրների մոտ 300 ներկայացուցիչների մասնակցությամբ՝ քննարկելու նոր մարտահրավերների համատեքստում մեր ժողովրդի խնդիրները: Որոշվեց ստեղծել համահայկական միջազգային մի կառույց, որ կնպաստեր հայության համախմբմանը: 2003 թ.-ին հիմնադրվեց Համաշխարհային հայկական կոնգրեսը (ՀՀԿ) հիմնական նպատակով՝ նպաստել հայության բոլոր հատվածների միասնությանը ազգային շահերի շուրջ:

«Ուրբաթ» ակումբում երեկ հյուրընկալված Համաշխարհային հայկական կոնգրեսի փոխնախագահ Վլադիմիր Աղայանի ներկայացմամբ, անցյալ տարի Կոնգրեսի գլխավոր խորհրդի բյուրոյի նիստում որոշվեց կազմակերպության գործունեությանը մեծապես մասնակից դարձնել: Ստեղծվեց Կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիա, որի առաջարկությամբ էլ Համաշխարհային հայկական կոնգրեսը կազմակերպեց հուլիսի 9-11-ը անցկացված «21-րդ դարի մարտահրավերները եւ հայ երիտասարդությունը» համահայկական երիտասարդական միջազգային խորհրդաժողովը:

Պրն Աղայանի խոսքերով, հենց երիտասարդության խնդիրներին ու կարողություններին էր վերաբերում խորհրդաժողովը, քանի որ այսօրվա բոլոր դժվարություններից, տնտեսական ճգնաժամերից ու սոցիալական ցնցումներից ամենից առաջ տուժում են երիտասարդները: Ուստի հենց երիտասարդությունը պետք է վերափոխի, մտածի կայուն զարգացման մասին: Սա էր ակնկալիքը այդ միջազգային խորհրդաժողովը հրավիրելուց, որին մասնակցեցին աշխարհի 25 երկրներից 250 պատվիրակ, որոնցից յուրաքանչյուր երկրորդ մասնակիցն իր կարծիքը հայտնեց առաջադրված խնդիրների առնչությամբ: Ընդ որում, խորհրդաժողովի մասնակից երիտասարդները հավաստել են իրենց պատրաստակամությունը լինելու ավելի գործնական՝ փոխանակ զգացմունքային դրսեւորումներով բավարարվելու: Վլադիմիր Աղայանը ներկայացրեց խորհրդաժողովի առնչությամբ արձագանքներն ու ընդունված հռչակագիրը, որոնց «Ազգի» ընթերցողն արդեն ծանոթ է հուլիսի 25-ի համարից:

Տես էջ 2

